«Էյչ Ար Էյջենսի» ՍՊԸ (HR Agency LLC)

Քուքի ֆայլերի (Cookies) քաղաքականություն

Ստեղծման / վերջին խմբագրման ամսաթիվ՝ **2026 թվականի նոյեմբերի 18**

Ի՞նչ են **քուքի ֆայլերը (Cookies)**

Մեր **Կայքից (www.HR.am)** օգտվելիս մենք հավաքում ենք **քուքի ֆայլեր (Cookies)** Ձեր մասին: **Քուքի ֆայլերը** փոքր չափի տեքստային ֆայլեր են, որոնք **Կայք** այցելելիս պահպանվում են Ձեր համակարգչում, պլանշետում կամ բջջային սարքում: **Քուքի ֆայլերը** մեզ օգնում են անխափան կառավարել և բարելավել **Կայքի** գործունեությունը, դրա արդյունավետությունը և սպասարկման որակը, պարզեցնել նավիգացիան, Ձեզ տրամադրել տեղեկատվություն նախընտրելի ձևաչափով, բարելավել դիզայնը, կատարելագործել որոնման պարամետրերը, ապահովել Ձեր անվտանգությունը մուտք գործելիս, ինչպես նաև Ձեզ տրամադրել որոշակի տեղեկատվություն, այդ թվում՝ Ձեզ համար հարմարեցված մարքեթինգային և գովազդային: **Քուքի ֆայլերը** կարող են տեղադրվել մեր կողմից, ինչպես նաև երրորդ կողմի կողմից՝ մեր անունից:

Կայք այցելելիս Դուք հնարավորություն ունեք համաձայնել կամ չհամաձայնել **քուքի ֆայլերի** օգտագործմանը և/կամ Ձեր ցանկությամբ կառավարել **քուքի ֆայլերի** օգտագործման նպատակները, օրինակ՝ Դուք կարող եք չհամաձայնել **քուքի ֆայլերի** օգտագործմանը վերլուծական և գործառութային և/կամ գովազդային և մարքեթինգային նպատակներով:

Սույն **Քուքի ֆայլերի քաղաքականությունը** հանդիսանում է **Անձնական տվյալների պաշտպանության 2026 թվականի քաղաքականության** (www.hr.am) բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

Քուքի ֆայլեր, որոնցից օգտվում ենք **Կայքի** միջոցով:

Քուքի ֆայլերի միջոցով մենք հետևում ենք **Կայքում** Ձեր վարքագծին՝ Ձեր փորձառությունն անհատականացնելու, **Կայքը** բարելավելու և Ձեզ **Կայքի** բազմաթիվ օգտակար գործառույթներից օգտվելու հնարավորություն տալու նպատակով:

- ***Պարտադիր քուքի ֆայլերի*** օգտագործումն անհրաժեշտ է, որպեսզի ընդհանուր առմամբ մուտք ունենաք **Կայք,** կարողանաք օգտվել **Կայքից** և ստանալ համապատասխան ծառայությունները:

- ***Վերլուծական և գործառութային քուքի ֆայլերը*** մեզ հնարավորություն են տալիս հետևել վերլուծական տվյալներին, հավաքել որոշակի վիճակագրություն, օրինակ՝ **Կայքի** այցելուների քանակը, և

միաժամանակ գնահատել **Կայքի** գործունեությունը: Նշված **քուքի ֆայլերը** պահպանում են տեղեկատվություն, որպեսզի յուրաքանչյուր հաջորդ այցելության ժամանակ անհրաժեշտ չլինի կրկին սահմանել պարամետրերը, և Դուք կարողանաք ազատորեն շարունակել / վերսկսել ծառայության ստացումը:

- ***Գովազդային և մարքեթինգային քուքի ֆայլերը*** **-** օգտագործվում են ծառայությունը պարզեցնելու համար և կարող են հավաքել վիճակագրական տվյալներ, ինչը հնարավորություն է տալիս Ձեզ տրամադրել Ձեր հետաքրքրություններին համապատասխանեցված մարքեթինգային և գովազդային առաջարկներ՝ ինչպես մեր, այնպես էլ մեր գործընկեր երրորդ կողմ ընկերությունների կողմից:

- ***Երրորդ կողմի քուքի ֆայլերը*** **-** օգտագործվում են երրորդ կողմի միջոցով *(Google.com, Facebook և այլն)* **Կայք** մուտք գործելու համար, ապահովում և պարզեցնում են Ձեր մասին վիճակագրական տվյալների հավաքումը: Բացի այդ, ***երրորդ կողմի քուքի ֆայլերի*** օգտագործումը կարող է ազդել երրորդ կողմի կայքից ստացվող տեղեկատվության և ծանուցումների վրա:

Ինչի՞ համար և ինչո՞ւ ենք օգտագործում **քուքի ֆայլեր**

Դուք կարող եք ընտրել՝ օգտվել, թե ոչ **քուքի ֆայլերից**, սակայն **քուքի ֆայլերի** օգտագործումից հրաժարվելու դեպքում հնարավոր է, որ Կայքից ամբողջությամբ կամ նրա որոշ գործառույթներից օգտվելն անհնար լինի:

- ***Պարտադիր քուքի ֆայլերի*** անջատումը և/կամ սահմանափակումը անհամատեղելի է **Կայքից** օգտվելու հետ, հետևաբար դրանց օգտագործումն անհրաժեշտ է **Կայքի** գործունեության համար:

- ***Վերլուծական և գործառութային քուքի ֆայլերի*** մասով, եթե Դուք թույլ չտաք այդ ֆայլերի օգտագործումը, մենք չենք իմանա, թե երբ եք այցելել մեր կայք, և չենք կարողանա վերահսկել դրա գործունեությունը:

- ***Գովազդային և մարքեթինգային քուքի ֆայլեր,*** առանց որոնց Դուք մուտք չեք ունենա մարքեթինգային և գովազդային տեղեկատվությանը, որն իր հերթին կհարմարեցվեր Ձեր հետաքրքրություններին՝ ապրանքներ և ծառայություններ առաջարկելու նպատակով:

- ***Երրորդ կողմի քուքի ֆայլերի*** չեղարկմամբ անհնար կդառնա երրորդ կողմի միջոցով Կայք մուտք գործելը, ինչպես նաև Ձեզ համար հարմարեցված մարքեթինգային և գովազդային առաջարկների ստացումը:

Որքա՞ն ժամանակ են **քուքի ֆայլերը** մնում սարքում

Քուքի ֆայլերը կարող են տարբեր ժամանակահատվածով մնալ Ձեր համակարգչում, պլանշետում կամ բջջային սարքում: Որոշ քուքի ֆայլեր *«սեսիայի քուքի ֆայլեր» են,* ինչը նշանակում է, որ դրանք գոյություն ունեն միայն այն ժամանակ, երբ Ձեր դիտարկիչը բաց է: Դրանք ավտոմատ կերպով ջնջվում են դիտարկիչը փակելուց հետո: Այլ **քուքի ֆայլեր** *«մշտական քուքի ֆայլեր» են,* ինչը նշանակում է, որ դրանք մնում են Ձեր դիտարկիչը փակելուց հետո: Կայքը կարող է դրանք օգտագործել Ձեր համակարգիչը ճանաչելու համար, երբ բացում եք դիտարկիչը և կրկին օգտվում համացանցից:

Կոնկրետ քուքի ֆայլի պահպանման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև՝ *«Ո՞ր **քուքի ֆայլերն** է օգտագործում մեր **Կայքը**»* կետում:

Ինչպե՞ս կառավարել **քուքի ֆայլերը**

Քուքի ֆայլերը կարող եք կառավարել տարբեր եղանակներով: Խնդրում ենք նկատի ունենալ, որ **քուքի ֆայլերի** արգելափակումը կամ ջնջումը կարող է ազդել Ձեր կողմից **Կայքից** օգտվելու վրա, և արդյունքում **Կայքն** ամբողջությամբ կամ դրա որոշ մասեր կարող են Ձեզ համար անհասանելի և օգտագործման համար անհնար դառնալ:

Երբ առաջին անգամ այցելում եք մեր **Կայք**, կամ երբ թարմացվում է **Քուքի ֆայլերի քաղաքականությունը**, հաջորդ այցելության ժամանակ մենք կխնդրենք Ձեզ համաձայնել **քուքի ֆայլերի** օգտագործմանը, եթե դրանք պարտադիր չեն: Համաձայնություն տալը կամ այն չեղարկելը հնարավոր է նույն էջում՝ *«Քուքի ֆայլերի կարգավորումների կառավարում»* բաժնում:

Քուքի ֆայլերը հնարավոր է կառավարել նաև Ձեր դիտարկիչի կարգավորումները փոխելու միջոցով: Մանրամասն տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ http://www.aboutcookies.org և/կամ http://www.allaboutcookies.org:

Ո՞ր **քուքի ֆայլերն** է օգտագործում մեր **Կայքը**

Cookie name	Տեղեկատվություն		Կարգավիճակ
culture	Ընտրված լեզու		Պարտադիր
access token	Մուտքի (ավտորիզացիայի) թոքեն		Պարտադիր
ngx-webstorage|anonymous	Անանուն օգտատիրոջ դեպքում ստեղծվում է եզակի նույնացուցիչ, որը պահպանվում է դիտարկիչում (localStorage) և ուղեկցում է այդ հարցումներին: Իսկ եթե օգտատերը մուտք է գործել համակարգ, ապա ուղարկվում է նրա userId-ն:		Պարտադիր

Քուքի ֆայլերի քաղաքականության գործող խմբագրությունը, փոփոխությունները և/կամ լրացումները

Մեր **Քուքի ֆայլերի քաղաքականությունը** համապատասխանում է **Կայքի** ծառայություններին և արտացոլում է փոփոխությունները՝ ծառայությունների և առկա պրակտիկայի համաձայն: Երբ մենք հրապարակենք սույն **Քուքի ֆայլերի քաղաքականության** փոփոխություններ և/կամ լրացումներ, մենք կվերանայենք և կփոխենք սույն **Քուքի ֆայլերի քաղաքականության** տիտղոսաթերթում նշված *«Ստեղծման / վերջին խմբագրման ամսաթիվը»*: Եթե մենք էական փոփոխություններ և/կամ լրացումներ կատարենք **Քուքի ֆայլերի քաղաքականության** մեջ, մենք Ձեզ կտեղեկացնենք այդ մասին՝ **Կայքում** փոփոխությունների և/կամ լրացումների վերաբերյալ ծանուցումը տեսանելի կերպով հրապարակելով: Խորհուրդ ենք տալիս ժամանակ առ ժամանակ ստուգել Կայքը՝ **Քուքի ֆայլերի քաղաքականության** կամ մեր այլ կարգավորող փաստաթղթերի փոփոխությունների և/կամ լրացումների մասին իմանալու համար:

Եթե մեր **Կայքը** դիտելիս հայտնաբերեք **քուքի ֆայլեր,** որոնք նշված չեն այստեղ, խնդրում ենք կապվել մեզ հետ info@hr.am հասցեով, և մենք մանրակրկիտ կուսումնասիրենք ստացված տեղեկատվությունը և կկատարենք անհրաժեշտ թարմացումները: